ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակի թափուր տեղի մրցույթի

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.36 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 2 դաստիարակի (0,4 դրույք) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,

- կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածներից անկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայությանդեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. հունիսի 14 մինչև 2022թ. հուլիսի 13-ը ներառյալ, ամենօր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. հուլիսի 19-ին՝ ժամը 12:00-ին, «Երևանի հ. 36 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում , հասցեն՝ ք.Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ. 14:

Տեղեկությունների համար զանգահարել 010340274 հեռախոսահամարով: